

---

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ  
100-ԱՄՅԱ ՏԱՐԵԼԻՑԸ

*Հոռմի պապ Ֆրանցիսկոսի, Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ի և Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Արամ Ա-ի ելույթները՝ նվիրված Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին, Վատիկանի Սուրբ Պետրոսի տաճարում մատուցված պատարագի ժամանակ*

ՍԱ ՈՂՁ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԸՆՏԱՆԻՔԻ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆՆ Է՝



Հարգելի՛ հայ քույրեր և եղբայրներ

100 տարի է անցել ձեր ազգի հանդեպ իրականացված սարսափելի ջարդերից և իրական տառապանքներից, որոնց հետևանքով շատ անմեղ մարդիկ զոհվեցին՝ որպես Քրիստոսի նահատակներ և հետևորդներ: Անգամ այսօր չկա այնպիսի մի հայ ընտանիք, որն այդ ողբերգության հետևանքով

հարազատներ կորցրած չլինի: Դա, իրոք, Մեծ եղեռն էր, ինչպես այն անվանում են հայերը:

Այս տարելիցին ես ձեր ազգի հանդեպ մերձավորություն եմ զգում և ցանկանում եմ հոգով միանալ ձեզ ձեր աղոթքներում, որոնք հառնում են ձեր սրտերից, ձեր ընտանիքներից և ձեր համայնքներից: Այսօր հարմար պահ է միասին աղոթելու համար, քանի որ մենք Սուրբ Գրիգոր Նարեկացուն Տիեզերական եկեղեցու վարդապետ ենք կարգել: Ես խորապես շնորհակալ եմ Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին II-ին, Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Արամ I-ին և Հայ կաթողիկե եկեղեցու Գերաշնորհ պատրիարք Ներսես Պետրոս XIX-ին՝ այսօր այստեղ գտնվելու համար:

X դարի վանական Սուրբ Գրիգոր Նարեկացին գիտեր, թե ինչպես պիտի ամենից լավ արտահայտի ձեր ժողովրդի զգացմունքները: Նրա ճիշդ մեղսավոր, թշվառ, անօգնականության թախիծով տառապող մարդկության աղոթքն էր՝ լուսավորված աստվածային սիրով և բարձրյալ Աստծու փրկիչ միջնորդության հույսով, որն ունակ է վերափոխել ամեն բան. «Ի ձեռն որոյ զարութեան վստահապէս ակնկալութեամբ, Վերագրեցեալդ յանցանաւք բեռանց, Աներկմիտ յուսով հաւատամ՝ Ի կարողին ձեռն ապաստանեալ. Ոչ քաւութեան միայն հասանել, Այլ զնոյն Ինքն տեսանել՝ Յողորմութիւն եւ ի գթութիւն եւ յերկնիցն ժառանգութիւն...» (Սուրբ Գրիգոր Նարեկացի, Մատենանոց տպարան, Բան ԺԲ. 32-39):

Ձեր քրիստոնեական ինքնակայությունը իրոք հնագույն է. այն ծագում է 301 թվականից: Սուրբ Գրիգոր Լուսավորիչը Հայաստանն առաջնորդեց մկրտության և վերափոխության: Դուք առաջինն եք երկրների մեջ, որոնք դարեր ի վեր ընդունել են Քրիստոսի Ավետարանը: Այդ հոգևոր իրադարձությունը անջնջելի նշան դրեց հայ ազգի, նրա մշակույթի և պատմության վրա, որտեղ տառապանքը հատուկ տեղ ունի, ինչպես վկայում է V դարում Սուրբ Վարդանանց մատուցած զոհը:

Քրիստոսի լույսով և օրհնությամբ լուսավորված ձեր ազգը շատ տառապանքներ և զրկանքներ է հաղթահարել՝ ոգեշնչված Խաչից եկող հույսով: Սուրբ Հովհաննես-Պողոս II-ը ասել է. «Տառապանքի և նահատակության ձեր պատմությունը թանկարժեք մարգարիտ է, որով հպարտանում է Տիեզերական եկեղեցին»: Մարդկանց մեղքերը քաված

Քրիստոսի հավատը ձեզ քաջություն է շնորհել ձեր ճանապարհին: Այդ հավատը ուղեկցում և ապավեն էր լինում ձեզ 100 տարի առաջ տեղի ունեցած ողբերգական դեպքերի ժամանակ, որոնք համարվում են XX դարի առաջին ցեղասպանությունը:

Հռոմի Պապ Բենեդիկտոս XV-ը, որը դատապարտեց Առաջին համաշխարհային պատերազմը՝ որպես «անիմաստ ջարդ», իրենից կախված ամեն բան արեց, որպեսզի դադարեցնի այն՝ շարունակելով Հռոմի Պապ Լեո XIII-ի ջանքերը՝ ուղղված 1894-1896 թթ. «մահացու իրադարձություններին» հակազդելուն: Այդ առիթով Հռոմի Պապ Բենեդիկտոս XV-ը սուլթան Մեհմեդ V-ին նամակ էր գրել՝ աղաչելով փրկել բազմահազար անմեղ մարդկանց:

Ոչ միայն հայերի և Տիեզերական եկեղեցու, այլ նաև ողջ մարդկային ընտանիքի պատասխանատվությունն է՝ հիշել այն, ինչ տեղի է ունեցել, որպեսզի այդ ողբերգության նախազգուշացումը թույլ չտա կրկնելու այդ սարսափը, որը վիրավորում է Աստծուն և մարդկային արժանապատվությունը: Այսօր նույնպես այդ հակամարտությունները փաստացիորեն վերածվում են անարդարացի բռնության՝ խառնվելով ազգային ու կրոնական տարբերությունների շահարկմանը: Բոլոր պետությունների և միջազգային կազմակերպությունների ղեկավարները նման հանցագործություններին պետք է հակազդեն պարտքի հաստատուն զգացումով՝ տեղի չտալով երկդիմությանը և անհանդուրժողությանը: Այս սգո տարելիցը թող բոլորի համար համեստ և անկեղծ մտորումների առիթ դառնա: Եվ թող ամեն սիրտ բաց լինի ներման համար, ինչը խաղաղության և ծնվող հույսի աղբյուր է: Սուրբ Գրիգոր Նարեկացին մարդկային հոգու արտասովոր մեկնիչ էր: Նա մարգարեացել է՝ ասելով. «Ի սկզբնահայրն սկսեալ մինչև ի սպառումն ծննդոց նորա՝ Կամայականն յանձնառութեամբ հաստեցի, եղի զիս ամենայնիդ պարտական չարեաց» (Մատեան ողբերգութեան, Բան ՀԲ. 23-25):

Որքա՛ն ապշեցուցիչ է համընդհանուր համերաշխության զգացումը: Որքա՛ն ճղճիմ ենք մենք մեզ զգում նրա կոչերի վեհանձնության առաջ:

Աստված տա, որ հայ և թուրք ժողովուրդները նորից հաշտության ուղի բռնեն, և թող խաղաղություն հաստատվի նաև Լեռնային Ղարաբաղում: Չնայած հակամարտություններին և լարվածությանը՝ հայերն ու թուրքերը

երկար ժամանակ խաղաղ գոյատևել են անցյալում ու անգամ բռնության թեժ պահերին նրանք համերաշխություն և փոխօգնություն են ցուցաբերել: Մերունդները միայն այդ ճանապարհով կստեղծեն իրենց համար լավագույն ապագան:

Մեզ՝ քրիստոնյաներիս համար, թող սա առաջին հերթին աղոթք լինի ի խորոց սրտից: Քրիստոսի գոհաբերության քավիչ ուժի շնորհիվ թող թափված արյունը բերի եղբայրության, որն արդեն միավորել է Կաթոլիկ և Հայ առաքելական եկեղեցիները: Հավատի նահատակ դարձած շատ անօգնական եղբայրների ու քույրերի վկայությունները միավորում են եկեղեցու տարբեր ուղղությունները: Դա էկումենիկ արյուն է, որը հանգեցրեց նրան, որ Սուրբ Հովհաննես - Պողոս II-ը 2000 թ. եղեռնի տարելիցին XX դարի բոլոր նահատակներին միասին հիշատակեց: Մեր միջոցառումը նույնպես ընթանում է այդ հոգևոր և եկեղեցական ենթատեքստում: Մեր երկու՝ եկեղեցիների ներկայացուցիչները մասնակցում են այս իրադարձությանը՝ արտահայտելով կատարյալ միասնություն երկրի վրա, որը գոյություն ունի դրախտի օրհնյալ հոգիների միջև: Եղբայրական սիրով վստահեցնում եմ, որ ես հոգով ձեզ հետ եմ Հայ առաքելական եկեղեցու՝ նահատակների սրբադասման արարողության ժամանակ, որը կկայանա ապրիլի 23-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, ինչպես նաև հուլիսին՝ Անթիլիասում՝ հիշատակի տուրքի միջոցառումների առնչությամբ:

## ԳԱՐԵԳԻՆ Բ-Ի ԵԼՈՒՅԹԸ \*



Մեր քույր Եկեղեցիների բարեկամությունը վկայող սրբազան այս արարողության ընթացքին, ի գոհունակություն Մեզ և մեր ժողովրդի, Հայ Եկեղեցու հայրերից Սուրբ Գրիգոր Նարեկացին Ձերդ Սրբության կողմից հռչակվեց Կաթողիկ Եկեղեցու սահմանումով՝ «Վարդապետ Եկեղեցու»: Աղոթուսույց և տիեզերալույս Սուրբ Նարեկացին X դարում մարդկային բոլոր սերունդների ապաշխարության և խոստովանության աղերսը որպես «Ի խորոց սրտից խոսք ընդ Աստուծոյ», երկինք բուրվառեց: Սուրբ վանականը, հայոց համար պաշտելի իր «շնչավոր մատյանով» Քրիստոսաշնորհ փրկության ուղին ցույց տվեց «մեղավորներին ու արդարներին, վեհերին ու փոքրերին, բարիներին ու եղեռնագործներին» (Բան Գ)՝ դեպի Աստված առաջնորդելով բոլոր ժամանակների հավատացյալներին: Նարեկացի ծնած

---

\* <http://armenpress.am/arm/news/>

մեր ժողովուրդը քրիստոնեական հավատի և ազգային ինքնության համար իր պատմության ընթացքում բազում արհավիրքներ է տեսել, փորձությունների դիմակայել:

Մեկ դար առաջ Օսմանյան Թուրքիայում մեր ժողովրդի հանդեպ իրագործվեց ցեղասպանության ահռելի ոճիրը: Կանխամտածված ծրագրով, աննկարագրելի դաժանությամբ սպանվեցին մեկ և կես միլիոն հայեր: Հինավուրց մեր ժողովուրդը արմատախիլ արվեց իր նվիրական բնօրրանից՝ պատմական հայրենիքից և տարագիր սփռվեց տարբեր երկրներում: Ավերվեց, ոչնչացվեց, բռնազավթվեց քրիստոնեական մեր դարավոր ժառանգությունը: Ոչինչ, սակայն, ոչ տառապանք, ոչ հալածանք, ոչ անգամ մահ՝ չսասանեց մեր ժողովրդին և չհեռացրեց իր սուրբ հավատից: Ազգովի նահատակության հոգևոր սխրանքի ողջ մեծությունն է այսօր պատկերվում մեր առջև, որը դրսևորեց մեր ժողովուրդը՝ կրկին հռչակելով դեռևս V դարում սահմանած իր ինքնության բանաձևը, որ քրիստոնեությունն ունենք ոչ իբրև հանդերձ, այլ իբրև մաշկի գույն (Եղիշե պատմիչ): Աստծո գթառատ ողորմությամբ մեր ժողովուրդը ուղղել է եղեռնահար մեջքը, նոր կյանք վերընձյուղել սփյուռքի համայնքներում և Հայաստանի արևելյան հատվածում վերականգնված պետականության հովանու ներքո: Վերելքի իր ուղին մեր ժողովուրդը կերտել է՝ դիմակայելով բազում զրկանքների ու դժվարությունների: Այսօր էլ մեր ժողովուրդը ապրում է Թուրքիայի և Ադրբեջանի կողմից իրականացվող շրջափակման մեջ, պայքարում Լեռնային Ղարաբաղի մեր ժողովրդի ազատ կյանքի համար և արդարության հաղթանակի հավատով շարունակում ջանքերը հանուն իր իրավունքների, Հայոց ցեղասպանության համընդհանուր ճանաչման և իր արդար պահանջատիրության: Ժամանակին մարդկությունը չկարողացավ կանխել Հայոց ցեղասպանությունը, վերացնել դրա հետևանքները և ականատեսը եղավ հոլոքոստի, Կամբոջայի, Ռուանդայի, Դարֆուրի և այլ ցեղասպանությունների: Այսօր էլ հակամարտությունների, պատերազմների, ահաբեկչությունների պատճառով մարդիկ ու ազգեր նեղության ու կարոտության մեջ են, հալածվում ու իրենց կյանքով են վճարում հավատքի համար: Մենք հավատացած ենք, որ Հայոց ցեղասպանության համընդհանուր ճանաչումը՝ որպես արդարության իրագործման և իրավունքների հաստատման ազդեցիկ օրինակ, կնպաստի ապահով ու արդար աշխարհի կերտմանը: Այս իմաստով Հայոց Ցեղասպանության 100-րդ տարելիցը հրավեր է աշխարհին անտարբեր չգտնվելու մարդկային տառապանքի ու նորօրյա նահատակությունների հանդեպ և գործադրելու առավել ջանքեր՝

դա-դարեցնելու և կանխելու համար մարդկության դեմ գործվող ոճիրները: Մա է այն պտուղը, որ պիտի աճի նահատակության արմատից:

Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի առիթով մատուցված այս Սրբազան Պատարագին, մեր նահատակների նվիրական հիշատակի առջև Մենք երախտագետ զգացումով ենք անդրադառնում, որ Ձերդ Սրբության երանաշնորհ նախորդներից Բենեդիկտոս XV Պապը բողոքի ձայն բարձրացրեց՝ ընդդեմ հայերի ցեղասպանության, իսկ Սուրբ Հովհաննես Պողոս Բ Պապը Մեզ հետ համատեղ հայտարարությամբ 2001 թվականին ճանաչել և դատապարտել է Հայոց ցեղասպանությունը: Այս առումով կարևոր նշանակություն ունի նաև Վատիկանի արխիվներում պահվող փաստաթղթերի հրապարակումը: Մեր ժողովուրդը շնորհակալությամբ է հիշում բոլոր նրանց, ովքեր ոչ միայն բարձրաձայնեցին Հայոց ցեղասպանության մասին և դատապարտեցին, այլ նաև մարդասիրական առաքելություններ իրականացրեցին՝ խնամելով որբերին, ապաստան տալով վերապրածներին, օգնելով հաղթահարել բազմատեսակ դժվարությունները:

Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ապրիլի 23-ին՝ աղոթական մասնակցությամբ քույր Եկեղեցիների, այդ թվում՝ Ձերդ Սրբության ներկայացուցիչների, բարձրաստիճան հյուրերի ու աշխարհասփյուռ մեր ժողովրդի բազմահազար զավակների, սրբադասվելու են վասն հավատո և վասն հայրենյաց մարտիրոսության պսակն ընդունած մեր բյուրավոր նահատակները: Երկնային գորքերին միացած սուրբ նահատակների բարեխոսությունն ենք հայցելու, որ Աստվածային խաղաղությունը հեղվի մարդկային կյանքին, և աշխարհում տեղ չգտնեն ցեղասպանության ողբերգությունները: Միրեցյալ եղբայր ի Քրիստոս, միանգամայն կիսում ենք Ձեր միտքը, որ նահատակությունը հարանվանական տարբերություններ չի ճանաչում: Արդարև, նահատակները միավորում են մեզ որպես զավակներ ու ծառաներ մեկ Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի համախմբվելու ու միասնական ջանքեր գործադրելու՝ հանուն աշխարհում սիրո, արդարության, խաղաղության հաստատման և քաղաքակրթությունների ու կրոնների երկխոսության, որին կոչում է մեզ սուրբգրական պատգամը. «Հոգ տարեք միմյանց՝ սիրո և բարի գործերի հորդորելով» (Եբր., 10.24): Թող Սուրբ Պետրոսի Սրբազան այս տաճարում մեր սրտերից երկինք բարձրացող աղոթքն ու հայցը լսելի լինեն Երկնավոր մեր Հորը՝ օրհնելու և ճշմարիտ ուղիներով առաջնորդելու բոլոր ջանքերը, որ գործադրվում են հանուն երկրի վրա խաղաղության և մարդկության ապահով ու բարօր կյանքի: Աղոթում ենք Ձերդ Սրբության

առողջության, Կաթոլիկ Եկեղեցու պայծառության համար և Աստծո հովանին ու բարիքները հայցում ամենքիս Սուրբ Գրիգոր Նարեկացի տիեզերալույս վարդապետի սրտաբուխ խոսքով. «Իսկ Դո՛ւ, առ ամենայն հնարս զօրաւոր, Մատո՛ ինձ ոգի փրկութեան, Աջ պաշտպանութեան, ձեռն այցելութեան, Հրաման բարութեան, լոյս ողորմութեան, Բան նորոգութեան, պատճառ քաւութեան, Գաւազան կենաց օգնութեան: Զի դու ես յոյս ապաւինութեան, Տէր Յիսուս Քրիստոս, Օրհնեա՛լ ընդ Հօր, Հոգւովդ Սրբով յաւիտեանս յաւիտենից: Ամէն» (Բան ԾԹ):



**ԿԻԼԻԿԻՈՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՐԱՄ Ա-Ի ԽՈՍՔՐ \***



Յանուն Հօր, Որդոյ եւ Սրբոյն Հոգոյ, Ամէն

Փառք կուտամ Աստուծոյ, ինչպէս նաեւ իմ երախտագիտութիւնս կուզեմ յայտնել Սրբազան քահանայապետին, որ ինձի եւ մեր ժողովուրդի զավակներուն այս հոգեպարար առիթը ընծայեց յաղորդակից դառնալու Աստուծոյ այս տաճարին մէջ Հայոց ցեղասպանութեան 100-րդ ամեակին առիթով: Այս պահուն, հոգեւոր ապրումներով լեցուն այս սրբազան պահուն, ես կուզեի յակիրճ կերպով կարեւորութեամբ ընդգծել յետեւեալ կէտերը.

---

\* [http://en.radiovaticana.va/news/2015/04/12/greetings\\_of\\_catholicos\\_aram\\_i\\_of\\_cilicia/1136219](http://en.radiovaticana.va/news/2015/04/12/greetings_of_catholicos_aram_i_of_cilicia/1136219)

1. Ինչպես երկրորդ դարուն եկեղեցւոյ հայրը՝ Տերտուլիանոս, ըսած է՝ նահատակներու արիւնը աւիշը դարձաւ եկեղեցւոյ կեանքին ու վկայութեան, այնպէս էլ մեր 1.5 միլիոն նահատակներու արիւնը աւիշը դարձաւ մեր եկեղեցւոյ ու ժողովուրդի կեանքին՝ մեզի տալով հաւատքի ու հայրենիքին համար ապրելու, գործելու ու պայքարելու ու նոյնիսկ իմացեալ մահով նահատակուելու սրբազան քաջութիւնը: Եւ այսօր, այս արարողութեան մեջէն մենք հոգեպէս կը լիցքավորուինք մեր նահատակներու հաւատով ու մանաւանդ սրբազան կտակով:

2. Այսօր Կաթողիկէ եկեղեցին Սրբազան Քահանայա-պետին զլիաւորութեամբ հռչակեց վարդապետ եկեղեցւոյ Հայ եկեղեցւոյ մեծագոյն սուրբերէն ու աստուծաբաններէն Սուրբ Գրիգոր Նարեկացին:

Արդարեւ, Նարեկացին եզակի աստուածաբան մ'է մեր եկեղեցւոյ եւ ընդհանրական եկեղեցւոյ կեանքին մեջ: Աստուածաբաններ խօսած էին Աստուծոյ մասին, Գրիգոր Նարեկացի խօսեցաւ Աստուծոյ հետ՝ մարդ-Աստուած երկխօսութիւն մը ստեղծելով իր «Մատեան Ողբերգութեան» ճամփով, որ եղաւ ու մնաց հայ ժողովուրդին երկրորդ Աստուածաշունչը:

\*\*\*

This is indeed a unique moment in our modern history; a moment marked by ecumenical and pan-Armenian symbolism. I would like to highlight three significant aspects of this historical moment.

First, we are grateful for Your Holiness' initiative in celebrating a holy mass in the Papal Basilica of Saint Peter in the Vatican in commemoration of the one-and-a-half million martyrs of the Armenian Genocide. As St. Paul says, "To die in Christ is to live" (Phil. 1:21). The Armenian martyrs belong to the "cloud of witnesses surrounding us" (Hebr. 12:1). With their faith, hope and vision, they have sustained and guided the life of our people during the past 100 years. We remember the words of the 2nd century church father Tertullian, "The blood of martyrs is the seed of the church." The canonization of the martyrs by the Armenian Church will fortify our people's faithfulness to their sacred legacy.

Second, today, Your Holiness has proclaimed Saint Gregory of Narek a doctor of the Church (Doctor Ecclesiae). We express our spiritual joy for this decision of the Catholic Church. In fact, Saint Gregory of Narek is one of the great mystics of world Christendom. He was an outstanding theologian, whose theology is not an intellectual reflection on God, but a dialogue with God. With his *BOOK OF LAMENTATIONS*, which is a human cry for meaning and salvation, St Gregory of Narek remains our eternal contemporary.

And finally in this spiritual context, by remembering and commemorating the Armenian martyrs, we also reclaim justice. Justice is a gift of God; violation of justice is a sin against God. For one hundred years, the Armenian people have remained faithful to the legacy of its martyrs by demanding the recognition of the Armenian Genocide and reparation. This commitment for justice will continue with renewed faith and resolve.

The Vatican has never been indifferent to the Armenian Genocide. Pope Benedict XV wrote a strongly worded letter to the Sultan of Turkey protesting the “massive crime” perpetrated against Armenians. In the following years, the Holy See extended its social and humanitarian aid to the Armenian people. In fact, the newly released historical documents confirm the Holy See’s firm stand with the Armenian people’s claim for justice. Our people value the moral support of the Holy See.

With these thoughts in mind and hope in heart, we express our profound gratitude for the love and fellowship that Your Holiness has always shown towards our church and people. We pray that Almighty God enrich your ministry with continued achievements at the service of the Church’s mission and unity.